

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ս) Ի՞նչ է նոյն անօթին մէջ ջուրը եւ սառցընէլու եւ սառցընէլու հերպը :


ԸՅՍ փորձը ընելու համար նախ երկու հարկաւոր բանի տեղեկութի ունենալու է .

Ա . Արկրիս վրայ եթէ օդ չըլլար նէ , բոլոր ջրի պէս եղած մարմինները գրեթէ բոլորովին գոլորչի կը դառնային . օրինակի համար , եթէ ջուրը այնպէս տեղ մը դնես որ օդ բնաւ չըլլայ , նոյն ջուրը գոլորչի կը հանէ , մինչև որ շոգին՝ ելած օդին տեղը առնէ , և անոր ծանրութիւնը ջրին վրայ բանեցընէ :

Բ . Արբոր լոյծ մարմին մը գոլորչի հանէ նէ , իւր բոլոր կողմը եղած մարմիններէն տաքութիւն կ'առնէ , որ պէս զի շոգին կարենայ առաջ գալ . բայց ան մարմիններուն բոլոր տուած տաքութիւնը ինքը առնելով , և յետոյ կորսընցընելով , վերջապէս ինքն ալ իւր յատուկ տաքութիւնը կը կորսընցընէ ու կը սառի : Այնքալ լաւ ու դիւրին հասկընալու համար , աս միայն պէտք է գիտնալ որ ամէն անգամ մարմին մը շոգի հանէ նէ , սաստիկ պաղուցութիւն մը առաջ կուգայ , որով մարմինը կը սառի . անոր համար է որ երբ տաք բաղնիքէն կ'ելենք մարմիննիս թաց , և պաղ տեղ մը մտնենք նէ , քանի մը վայրկեանէ ետև ցուրտ կը զգանք , և իսկոյն տաք տեղ մտնել կ'ուզենք . պատճառը այն է որ մարմիններնուս վրայ կեցած ջուրը գոլորչիք կը դառնայ , և վերը ինչպէս որ մեկնեցինք նէ՝ ՚ի հարկէ ցուրտ կը պատճառէ :

ԸՅԵ երկու հարկաւոր պատճառները լաւ գիտնալով , ըրած փորձերնիս շատ դիւրաւ կը հասկըցուի :

Ինչ և իցէ աման մը առ , մէջը եթեր՝ ըտուած լոյծ մարմինը դիր . (վասն զի աս մարմինը ջրէն աւելի դիւրաւ շոգի կը հանէ .) նոյն անօթին մէջ պզտիկ ապակիէ խողովակ մը դիր . աս խողովակը առաջուց ջրով լեցընելու է ու երկու կողմէն գոցելու է : Այնտոյ խողովակով ամանը ԱԲԳ ձևը ունեցող մեծ անօթի մը տակը դիր , ու օդահան մեքենայով օդը հանէ .



քանի որ օդը ելլէ նէ , ամանին մէջի ջուրը ծանրութիւն բնաւ չկրելով՝ շոգի կը դառնայ ու կը սկսի եռալ . բայց նոյն ժամանակը , ինչպէս որ ըսինք , սաստիկ ցուրտ մը կը պատճառի , որ կարող է փոքր խողովակին մէջ եղած ջուրը սառեցընել :

ԸՅԶ պարզ ու գեղեցիկ փորձովս մի և նոյն ամանի մէջ առանց կրակի ու առանց ցրտի՝ ջուրը մէկ կողմէն գոլորչի կը հանէ , միւս կողմէն կը սառի :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՐԵՒԻՆ ՏԱՏԵԱՆ

Վարդէ Դորս անչրեաներոան վրայ :

ԸՄԻՆ երևոյթները որչափ ալ բնական և օգտակար ըլլան , տգէտ մարդկանց վախի պատճառ կրնան ըլլալ . և ասոր փորձը կ'երևնայ ան անձրևներուն վրայ , որ ռամիկները բնակա-

1 Գ. Էther.